



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. /374010/ 287401, 2 25 22

N ----- <<04>> փետրվար 2011

Ֆաքս /374010/ 28 18 32

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ   7  

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ԹԻՎ 55 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆԸ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի հուլիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին>> թիվ 55 որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<7. Մարզպետն անձամբ քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում է յուրաքանչյուր ամսվա վերջին հինգշաբթի օրը ժամը 14:00-ին Վայք քաղաքում, իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը ժամը 14:00-ին Եղեգնաձոր քաղաքում: Հրատապ լուծում պահանջող հարցերով ընդունելություն կարող է իրականացվել յուրաքանչյուր երկուշաբթի ժամը 14:00-ին:

Ընդունելության օրվա փոփոխության, ինչպես նաև արտահերթ ընդունելություն կազմակերպելու դեպքում հանրությունն այդ մասին տեղեկացվում է նախապես կազմակերպման օրվանից առնվազն երեք օր առաջ:>>:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2009 թվականի ապրիլի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 55 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին>> թիվ 25 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ